Արձանագրություն N 2
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/067 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«28» Հոկտեմբերի 2021թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գալուստ Գալստյանը.
Անդամ՝ Ալինա Ավետիսյանը.
Քարտուղար՝ Արթուր Բաղալյանը:
Գնահատող հանձնաժողովի անդամ Սերգեյ Բեժանովը բացակայում էր նիստից:

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/067» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01254973, հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ., 13/30, հեռ.: (091) 40-40-73

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0

2. Էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերի մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների պլանավորված գները՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի		Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	Պլանավորված գինը /ՀՀ դրամ/	անվանումը	գնային առաջարկը (առանց ԱԱՀ)	գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ)
1	Գունավոր տպիչ	8,500,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	7,083,050	8,499,660
2	Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք A3	720,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	5,000,000	6,000,000

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիրը հստակ չէ սահմանված, մասնավորապես՝ «առնվազն» բառը հստակ չի սահմանում ապրանքի նկարագրությունը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում առկա է ավելորդ տեղեկատվություն, որը չի վերաբերում մասնակցի առաջարկվող ապրանքին, մասնավորապես՝ «կամ համարժեք» բառերի վերաբերյալ կետը ավելորդ է:

Ընդունվել է որոշում՝
Կողմ - 2, դեմ՝ – 0

4. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը չկայացած հայտարարել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/067 ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը,
2. Մեկ աշխատանքային օրով կասեցնել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/067 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը,
3. Առաջարկել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 1-ին ժամը 11:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացի 3 հասցեում:
5. Սույն որոշման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/067 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բադալյանին.

Ընդունվել է որոշում.
Կողմ՝ 2, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ. Գալստյան

գնահատող անդամներ՝ _____ Ա. Ավետիսյան

քարտուղար՝ _____ Ա. Բադալյան